**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ ԿՈՂՄԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Բավարարել դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ 18.04.2009թ. գրությունը գործին կցելու վերաբերյալ 05.05.2009թ. միջնորդությունը, եւ նշված գրությունը սահմանված կարգով կցել գործին:

2. Բավարարել դիմող կողմի՝ 07.05.2009թ. միջնորդությունը՝ միջնորդությանը կից ներկայացված՝ Հայփնաբերված փարբերություններով ցուցակը՝ 32 էջից, եւ ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչություն ուղարկված պաշտոնական գրությունների ու դրանց պատասխանների պատճենները գործին կցելու վերաբերյալ, եւ նշված լրացուցիչ փաստաթղթերը սահմանված կարգով կցել գործին:

3. Մերժել դիմող կողմի՝ ««Հայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ 05.05.2009թ. միջնորդությունը՝ նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանն իր՝ 21 ապրիլի 2009 թվականի ՍԴԱՈ-33 աշխատակարգային որոշմամբ նշված գործի դատաքննությունը որոշել է անցկացնել գրավոր ընթացակարգով, եւ որ արդեն իսկ առկա են գրավոր ընթացակարգով գործը քննելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 մայիսի 2009 թվականի
ՍԴԱՈ -41